2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) երկրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Կազմակերպության ակտիվների ու պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների կիսամյակային զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Կազմակերպության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Կազմակերպությունը:

Կազմակերպության Վարչության անդամներ՝

Հրաչյա Թոխմախյան	**Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն**		31.08.18թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Անուշ Պետրոսյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն**		31.08.18թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արտակ Միքայելյան	**Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ**		31.08.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Զադրյան	**Վարչության անդամ, Իրավաբանական բաժնի ղեկավար**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ

ՖԻՆՔԱ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կառավարման մարմինների 2018 թվականի գործունեության առաջին կիսամյակի սույն զեկույցը ներկայացնում է՝

1. Կազմակերպության բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
2. Էական դեպքերի նկարագիրը,
3. Կազմակերպության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

1. Կազմակերպության բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը

1.1. Ընդհանուր տեղեկություններ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2006 թվականի մարտի 28-ին որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 128Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 13 գրանցման վկայական:

Կազմակերպությունը ստեղծվել է «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ Ինք.» ամերիկյան ոչ առևտրային կազմակերպության կողմից ՀՀ միկրոֆինանսական շուկայի ձևավորման նախնական փուլում՝ նպատակ ունենալով ֆինանսական ծառայություններ մատուցել ֆինանսական հաստատություններից սահմանափակ վարկավորման հնարավորություն և ամենացածր եկամուտ ունեցող ձեռնարկատերերին:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 4,905,960 հազար ՀՀ դրամ, որը բաժանված է 490,596 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Կազմակերպության միակ բաժնետեր է հանդիսանում «ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու. Էյ» կազմակերպությունը:

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը:

Գործունեությունը սկսելուց ի վեր Կազմակերպությունն իր բնույթով հանդիսանում է ունիվերսալ վարկային կազմակերպություն, մասնավորապես, որպես հիմնական գործունեություն ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց, որպես գործակալ կնքում է ԱՊՊԱ և ապահովագրական այլ պայմանագրեր: Իր կողմից մատուցվող ծառայություններն ամբողջականացնելու նպատակով Կազմակերպությունը սկսած 2013թ-ից մատուցում է նաև արտարժույթի փոխանակման ծառայություններ:

Կազմակերպությունն ունի 38 մասնաճյուղ և գործունեություն է իրականացնում ՀՀ բոլոր մարզերում:

1.2. Ֆինանսական գործունեության վերլուծություն

Սույն ֆինանսական գործունեության ամփոփ վերլուծության համար հիմք են հանդիսացել Կազմակերպության 2018 թվականի երկրորդ եռամսյակի հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Ակտիվներ

Կազմակերպության ընդհանուր ակտիվները 2018թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել են 27,380,662 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 2017թ. դեկտեմբերի 31–ի դրությամբ 26,977,539 հազ. ՀՀ դրամ ընդհանուր ակտիվների համեմատ նվազելով 403,123 հազ. ՀՀ դրամով կամ 1.5%-ով: Ակտիվների նվազումը հիմնականում պայմանավորված է հաճախորդներին տրված վարկերի նվազմամբ, ինչը մանրամասն նկարագրված է հաջորդ բաժնում:

Ակտիվների կառուցվածքը 2018թ. հունիսի 30-ի դրությամբ ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1

Վարկեր

2018 թ. հունիսի 30-ին հաճախորդներին տրված վարկերի ծավալը կազմել է 23,782,914 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա վերջի համեմատ նվազել է 0.8%-ով կամ 198,236 հազ. ՀՀ դրամով:

Հաճախորդների տրված վարկերի նվազումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- Վարկային պորտֆելի սեզոնայնությամբ, պատմականորեն հունիս – սեպտեմբեր ամիսներին նկատվել է վարկային պրոդուկտների նկատմամբ պահանջարկի հարաբերական անկում՝ կապված գյուղատնտեսության ոլորտում բերքահավաքի շրջանի և ամռան ամիսներին բիզնես ակտիվության նվազեցման հետ;
  բանկային համակարգում հավելյալ լիկվիդային միջոցների առկայությամբ պայմանավորված միկրոֆնիանսավորման շուկայում մրցակցության բարձրացման հետ:

2017թ. դեկտեմբերի 31-ի համեմատ 2018թ.-ի հունիսի վերջի դրությամբ ֆիզիկական անձանց տրված վարկերի ծավալը աճել է 0.13%-ով կամ 22,853 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 17,869,046 հազ. ՀՀ դրամ, անհատ ձեռնարկատերերին տրված վարկերի ծավալը նվազել է 5.8%-ով կամ 303,855 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 4,924,458 հազ. ՀՀ դրամ, իսկ իրավաբանական անձանց տրված վարկերի ծավալն աճել է 9.1%-ով կամ 82,766 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 989,410 հազ. ՀՀ դրամ:

2017թ. հունիսի 30–ի դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ վարկատեսակների ներկայացվում է ստորև.



Գծապատկեր 2

2018թ. հունիսի 30–ի դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ տնտեսության ոլորտների ներկայացվում է գծապատկեր 3-ում.



Գծապատկեր 3

Պարտավորություններ

2018թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության պարտավորությունները կազմել են 20,944,305 հազ. ՀՀ դրամ՝ 2017թ. դեկտեմբերի 31–ի համեմատ աճելով 4.4%-ով կամ 874,298 հազ. ՀՀ դրամով:

2018 թ. հունիսի վերջի դրությամբ Կազմակերպության կողմից օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունները կազմել են 12,797,777 հազ. ՀՀ դրամ կամ պարտավորությունների 61.1%-ը, ինչը փաստում է, որ Կազմակերպության համար առանցքային դեր և նշանակություն ունի միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումը և ընդլայնումը:

Պարտավորությունների 16.8%–ը կազմում են Կազմակերպության կողմից թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերը 3,513,131 հազ. ՀՀ դրամի չափով:

Պարտավորությունների 2.8%–ը կազմում են հետգնման պայմանագրերի գծով պարտավորությունները 577,283 հազ. ՀՀ դրամի չափով, որոնց գծով որպես գրավ տրվել են ՀՀ պետական պարտքային արժեթղթեր 600,868 հազար ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքի չափով:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցություն: Կազմակերպության ղեկավարությունը, կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը, մշտապես առաջնային դեր է հատկացնում դրանց խորացմանը և ընդլայնմանը: 2018 թվականի ընթացքում Կազմակերպությունը շարունակել է ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

2018 թվականին Կազմակերպության հետ համագործակցող և գործընկեր միջազգային կառույցների շարքում են եղել Asian Development Bank-ը, International Finance Corporation-ը, BlueOrchard–ը, Developing World Markets-ը, Invest In Vision Fund–ը, responsAbility Investments AG–ն, BANK IM BISTUM ESSEN eG–ն, Symbiotics S.A.-ը:

2018 թվականի հունվարին Կազմակերպությունը ստացել է Ասիական Զարգացման Բանկի հետ կնքված 200,000 դոլար արժողությամբ դրամաշնորհի առաջին մասը՝ «Հաճախորդների պաշտպանության սերտիֆիկատ»–ի (SMART Certificate) ստացման նպատակով:

2018 թվականին Կազմակերպությունը շարունակել է համագործակցությունը Գերմանահայկական Հիմնադրամի (GAF) հետ, որի շրջանակներում Կազմակերպությանը տրամադրվել է 74,412 հազար դրամի վարկ:

Սեփական կապիտալ

2018թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության սեփական կապիտալը կազմել է 6,436,357 հազ. ՀՀ դրամ, որը 2017թ. դեկտեմբերի 31–ի համեմատ նվազել է 471,176 հազ. ՀՀ դրամով կամ 6.8%-ով: Սեփական կապիտալի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է առաջին կիսամյակի զուտ շահույթի և 2017թ. ֆինանսական արդյունքների գծով հայտարարված շահաբաժինների տարբերությամբ:

Եկամուտներ և ծախսեր

Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքում կազմել են 2,564,752 հազ. ՀՀ դրամ իսկ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները՝ 1,135,850 հազ. ՀՀ դրամ, այսպիսով հաճախորդներին տրված վարկերից ստացված եկամուտները կազմել են 3,700,602 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 5.6%-ով կամ 220,329 հազ. ՀՀ դրամով: Տոկոսային և նմանատիպ եկամուտների նվազումը հիմնականում պայմանավորված է հաճախորդներին տրված վարկերի նվազմամբ:

Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքում կազմել են 750,386 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 12.1%-ով կամ 103,742 հազ. ՀՀ դրամով:

Տոկոսային և նմանատիպ ծախսերի նվազմանը նպաստել են հետևյալ գործոնները.

- 2018թ. Կազմակերպության փոխառու միջոցների և հետգնման պայմանագրերի՝ առաջին կիսամյակի ամսական միջին մնացորդը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ամսական միջին մնացորդի համեմատ նվազել է 8%–ով:

- 2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է առավել խիստ և արդյունավետ իրացվելիության կառավարում: Արդյունքում նախկինում բարձր տոկոսադրույքով ներգրավված փոխառու միջոցները փոխարինվել են ավելի ցածր տոկոսադրույքով փոխառության պայմանագրերով:

Հաճախորդներին տրված վարկերի գծով հնարավոր կուրուստների ծախսը հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքում կազմել է 133,226 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 73.4% -ով կամ 366,768 հազ. ՀՀ դրամով, ինչը հաճախորդներին տրված վարկային պորտֆելի որակի բարելավման արդյունք է:

Շահութաբերության հիմնական ցուցանիշները

2018 թվականի առաջին կիսամյակի գործունեության արդյունքում զուտ շահույթը կազմել է 832,316 հազ. ՀՀ դրամ:

Կազմակերպության գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են.

Կապիտալի շահութաբերություն (ROE)՝ 24.9%,
Ակտիվների շահութաբերություն (ROA)՝ 6.1%:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 3,393.08 ՀՀ դրամ:

Կազմակերպության մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը 2018թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 13,119 ՀՀ դրամ, անվանական արժեքը՝ 10,000 ՀՀ դրամ:

Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի և մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշի հարաբերակցությունը (P/E ratio) կազմել է 3.87:

1.3. Ներքին հսկողության համակարգ

Ներքին հսկողության համակարգը Կազմակերպության գործունեության բոլոր ոլորտների և գործընթացների նկատմամբ հսկողության ապահովումն է:

Կազմակերպությունում ներկայումս ներդրված է արդյունավետ, միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ, որն ամրագրված է Կազմակերպության ներքին իրավական ակտերով:

Ավելին, Կազմակերպությունում գործում են Ներքին հսկողության, Վարկային ռիսկերի կառավարման և Ներքին աուդիտի ստորաբաժանումներ, որոնք նպաստում են ներքին հսկողության արդյունավետության բարձրացմանը:

Ներքին հսկողության բաժնի խնդիրն է Կազմակերպությունում ներդնել արդյունավետորեն գործող ներքին հսկողական համակարգ: Վարկային ռիսկերի կառավարման բաժնի գործառույթն է ուժեղացնել ներքին հսկողության համակարգը վարկավորման գործընթացներում: Ներքին աուդիտի բաժնի խնդիրն է բացահայտել Կազմակերպության նպատակների իրագործմանը խոչընդոտող հնարավոր ռիսկերի բացահայտումը և ներքին հսկողության համակարգի բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

1.4. Կազմակերպության աշխատակիցները

Նվիրված աշխատակիցները Կազմակերպության ամենամեծ ձեռքբերումներից են, Կազմակերպության ներկայիս հաջողության և հետագա զարգացման հիմնասյունը: Կազմակերպության հմուտ մասնագետներից կազմված թիմը համախմբված է մեկ ընդհանուր նպատակի շուրջ և ծառայում է կազմակերպության առաքելությանը՝ այն է «Հիմնավոր լուծումների միջոցով հաղթահարել աղքատությունը՝ օգնելով մարդկանց ստեղծել ակտիվներ, նոր աշխատատեղեր և բարելավել իրենց ապրելակերպը»: Կազմակերպությունը առավել քան կարևորում է ընդունված արժեքային համակարգի չափանիշների, միջանձնային դրական հարաբերությունների պահպանումը, ջերմ մթնոլորտը, թափանցիկությունը և, ընդհանուր առմամբ, կորպորատիվ մշակույթը, ինչը ստեղծվել է աշխատակիցների ջանքերի շնորհիվ:

Կազմակերպության աշխատակիցները շարունակում են ջանք չխնայել՝ հաճախորդներին մատուցելով նորարական և օգտակար ֆինանսական ծառայություններ՝ հնարավորություն ընձեռելով ցածր եկամուտ ունեցող անհատներին և համայնքներին ներդրում կատարել իրենց ապագայում և կերտելու ավելի լուսավոր ապագա:

Աշխատանքների արդյունավետ կառավարմանն ու աշխատակիցների զարգացմանը մեծապես նպաստում են ներքին վերապատրաստումները՝ միտված զարգացնելու ֆինանսական տեղեկացվածությունը, հաղորդակցման և բանակցելու ունակությունները, ծանոթացնելու նոր պրոդուկտների և ծառայությունների մանրամասնություններին, վարկավորման տեխնոլոգիաներին, և ապահովելու վարվելակերպի կանոնների պահպանմանը, ինչպես նաև ապահովելու հաճախորդամետ մոտեցում և դրական միջանձնային հարաբերություններ:

Յուրաքանչյուր աշխատակցի հնարավորություն է տրվում զարգացնելու թե՛ մասնագիտական և թե՛ անձնային հատկանիշները, ինչպես նաև ունենալու մասնագիտական առաջխաղացում Կազմակերպության ներսում:

Շարունակվում են կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված աշխատակիցների թիմային ոգու ամրապնդմանը և միջանձնային փոխհարաբերությունների զարգացմանը:

2018թ. առաջին կիսամյակի ընթացքում սկսվել է իրագործվել Աշխատակիցների զարգացման ծրագիրը, որի նպատակը կազմակերպության աշխատակիցներից առավել մեծ պոտենցիալ ունեցողների բացահայտումն ու զարգացումն է կազմակերպության ապագա առաջնորդներին պատրաստելու նպատակով: Ծրագրի առաջին փուլը կազմակերպվել է վարկային մասնագետների համար, սակայն այն կրելու է շարունակական բնույթ՝ ընդգրկելով նաև այլ մասնագետների: Ընտրված աշխատակիցները արդեն մասնակցել են առաջնորդման թեմայով դասընթացին: Տարբեր դասընթացներին նրանց մասնակցությունը շարունակվելու է, ինչպես նաև ընդգրկված են լինելու Կազմակերպության կողմից իրականացվող տարբեր նախագծերում:

Հիմքեր են ստեղծվել հայաստանյան բուհերից պրակտիկանտների ներգրավման համար, ինչը կարող է աջակցել նոր աշխատակիցների համալրման գործընթացին, քանի որ նրանք կարող են դառնալ մեր պոտենցիալ աշխատողները: Մշակվել է հստակ

ծրագիր Կազմակերպության մի քանի բաժիններում պրակտիկան կազմակերպելու համար, ինչպես նաև մի շարք համալսարանների հետ արդեն ձեռք են բերվել համաձայնություններ:

Տարեկան երկու անգամ շարունակվում են իրականացվել աշխատակիցների գնահատման միջոցառումներ, որոնք օգնում են հստակ և թափանցիկ տեղեկության հիման վրա գնահատել աշխատակցի ունակությունները, զարգացնել թույլ կողմերը և ստեղծել առաջխաղացման հնարավորություններ:

Շարունակվում են նաև բարելավվել աշխատակիցների համար նախատեսված արտոնությունները՝ բժշկական ապահովագրության պայմանները, աշխատակիցներին տրամադրվող վարկի պայմանները, որն ի դեպ, մեծ պահանջարկ է վայելում և օգնում է աշխատակիցներին բավարարելու իրենց ֆինանսական կարիքները անհամեմատ բարենպաստ պայմաններով:

Փորձը ցույց է տալիս, որ այս բոլոր գործընթացների արդյունքում աշխատակիցները դառնում են առավել պատրաստակամ և ճկուն՝ դիմավորելու նոր մարտահրավերներ և իրականացնելու արդյունավետ նորամուծություններ:

2018թ.–ին հունիսի 30–ի դրությամբ Կազմակերպության աշխատակիցների թվաքանակը կազմել է 526 մարդ (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 543 մարդ):

1.5. Տարածքային գործունեություն

Կազմակերպության մասնաճյուղերը տեղակայված են ՀՀ բոլոր 11 մարզերում, և 2017 թվականի հունիսի վերջի դրությամբ դրանց թիվը կազմում է 38:

Կազմակերպությունը մշտապես իրականացնում է կադրերի որակավորման բարձրացմանը, նյութատեխնիկական բազայի ընդլայնմանը, մասնաճյուղերի կապիտալ վերանորոգմանը և տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումներ իր բոլոր մասնաճյուղերում:

2. Էական դեպքերի նկարագիրը

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցի հրապարակման օրը Կազմակերպության գործունեությունում տեղի են ունեցել հետևյալ նշանակալի իրադարձությունները.

- 2018 թվականի հունվարին Կազմակերպության միակ բաժնետեր “ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու.Էյ.”-ը որոշում է կայացրել Կազմակերպության նոր կանոնադրությունը հաստատելու վերաբերյալ (այն է՝ փոփոխել խորհրդի կողմից ըստ կանոնադրության հաստատվող գործարքների շեմը, սահմանելով այն 50,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ), որը հաստատվել է 2018 թվականի մարտին:
- 2018 թվականի փետրվարին Կազմակերպության Խորհուրդը որոշում է կայացրել գլխավոր իրավախորհրդատու, իրավաբանական բաժնի ղեկավար և կորպորատիվ քարտուղար Հարություն Չադրյանին Ընկերության վարչության

անդամ նշանակելու և նրա պաշտոնավարման սկիզբ ՀՀ Կենտրոնական բանկում գրանցման պահը համարելու վերաբերյալ:

- 2018 թվականի հունիսին Կազմակերպության միակ բաժնետեր "ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու.Էյ."-ը որոշում է կայացրել՝ կազմակերպության 2017թ. շահույթից 1,234,448,050 (մեկ միլիարդ երկու հարյուր երեսունչորս միլիոն չորս հարյուր քառասունութ հազար հիսուն) ՀՀ դրամը, ներառյալ հարկերը, ուղղել կազմակերպության բաժնետոմսերի դիմաց շահութաբաժնի վճարմանը՝ վճարման վերջնաժամկետ սահմանելով մինչև 2018թ. հուլիսի 31-ը:

  Սույն Զեկույցի հրապարակման օրվա դրությամբ Կազմակերպությունը ամբողջովին վճարել է շահութաբաժինների գծով պարտավորությունը:

3. Կազմակերպության հետագա զարգացման նկարագիրը

Կազմակերպության հեռանկարային զարգացման հիմնական ուղղություններն են.

- վարկային պորտֆելի որակի բարելավում, հաճախորդների վարկունակության գնահատման բարելավման և պատասխանատու ֆինանսավորում իրականացնելու միջոցով,
- հաճախորդների դրական փորձառություն ապահովելու միջոցով հաճախորդների պահպանման ցուցանիշի բարելավում, ինչպես նաև նոր հաճախորդների ներգրավում,
- ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիա, ֆինանսավորող կազմակերպությունների ցանցի ընդլայնում ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում,
- գործարար գործընթացների օպտիմալացում՝ պահպանելով գործառնական ռիսկերի ընդունելի մակարդակը,
- աշխատակիցների որակավորման բարձրացում ներկազմակերպական և արտաքին դասընթացների միջոցով,
- միկրոֆինանսավորման ոլորտում մրցակցային դիրքի բարելավում, նորարարական վարկատեսակների մշակում և ներդրում:

Ապագա ժամանակահատվածում առաջադրված խնդիրները պայմանավորված են Կազմակերպության առջև դրված նպատակներով և միտված են բարելավել գործունեության ինչպես որակական բնութագրիչները, այնպես էլ ֆինանսական ցուցանիշները:

Հեռանկարային զարգացման ուղղությունները ապահովելու նպատակով Կազմակերպությունը պատրաստվում է իրագործել հետևյալ նախաձեռնությունները.

- «Հաճախորդների պաշտպանության սերտիֆիկատ»–ի (SMART Certificate) ստացման ուղղությամբ Կազմակերպությունը ընտրել է սերտիֆիկացում իրականացնող MicroFinanza Raiting LLC (այսուհետ՝ MFR) իտալական ծագմամբ կազմակերպությունը և 2017 թ. դեկտեմբեր ամսին կնքել է Ծառայությունների մատուցման պայմանագիր: Նախնական գնահատումը սկսվել է 2018 թվականի փետրվարին, երբ MFR ներկայացուցիչը այցելել է Հայաստան: Այցի նպատակն էր անցկացնել անկախ ուսումնասիրություն և գնահատում: Ըստ Ղեկավարության գնահատականի ակնկալվում է, որ «Հաճախորդների պաշտպանության սերտիֆիկատը» կշնորհվի 2018թ.-ի 4-րդ եռամսյակի ընթացքում;
- 2016 թվականին մեկնարկած «հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգի» ներդրման նախագծի ավարտ, ինչը կնպաստի հաճախորդների վերաբերյալ համակարգված տեղեկատվության հավաքագրմանը և հավաքագրված տեղեկատվության մշակման միջոցով նրանց կարիքների բացահայտմանը: Այս համակարգը նաև հնարավորություն կտա ունենալ վարկային որոշումների ավտոմատ կայացման գործիք: 2017 թվականի վերջին ներդրվել է համակարգի թեսթային տարբերակը:
- Պլանշետային համակարգիչների միջոցով վարկավորման գործընթացի սկզբնական փուլերի մասնաճյուղերից դուրս իրականացում (tablet banking), ինչը ուղղված է վարկավորման գործընթացի օպտիմալացմանը և հաճախորդի փորձառության բարելավմանը:
- 2018թ մարտին ներդրվել է առցանց վարկավորման համակարգը՝ Online Loan Application (OLA) հավելվածը, որն իրենից ներկայացնում է առցանց տարբերակով արագ և ֆունկցիոնալ առումով արդյունավետ և վարկավորման համակարգ:

Ենթահավելված 2

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 126-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի

Ֆինանսական վիճակի մասին
«30» հունիս 2018թ.

"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ազաթանգեղոսի 2ա
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա վերջ
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	1,263,559	465,577
Բանկերում տեղաբաշխված միջոցներ		135,020
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	23,481,383	23,706,584
Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	1,228,431	1,285,973
Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	109,510	19,375
Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում	116,592	135,761
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	539,431	429,795
Հետաձգված հարկային ակտիվներ	115,017	128,638
Ստացվելիք տոկոսներ	319,714	293,162
Այլ ակտիվներ	207,025	377,654
Ընդամենը՝ ակտիվներ	**27,380,662**	**26,977,539**
Պարտավորություններ		
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	6,961,330	7,134,925
Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	7,342,728	8,025,334
Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	933,746	242,026
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	378,025	643,683
Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր	3,427,291	3,435,107
Պահուստներ	36,385	26,166
Վճարման ենթակա շահաբաժիններ	1,172,726	-
Վճարվելիք տոկոսներ	231,032	224,137
Այլ պարտավորություններ	461,042	338,629
Ընդամենը՝ պարտավորություններ	**20,944,305**	**20,070,007**
Կապիտալ		
Կանոնադրական կապիտալ	4,905,960	4,905,960
Պահուստներ		
Գլխավոր պահուստ	251,166	186,195
Վերագնահատման պահուստներ	14,572	75,204
Կուտակված շահույթ	1,264,659	1,740,174
Ընդամենը՝ կապիտալ	**6,436,357**	**6,907,533**
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ	**27,380,662**	**26,977,540**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 13/07/2018

Վարկային կազմակերպության վարչության նախագահ Հ.Թոխմախյան
(Գործադիր տնօրեն)
Գլխավոր հաշվապահ Ա.Միքայելյան

Ենթահավելված 1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 126-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի

Ենթահավելված 6

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 ա)

«30» հունիս 2018թ.

"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ագաթանգեղոսի 2ա

(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	2,564,752	2,809,728
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(750,386)	(854,128)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**1,814,366**	**1,955,600**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,135,850	1,111,203
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(5,767)	(5,986)
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից զուտ շահույթ/վնաս	20,619	(51,925)
Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)	46,810	37,757
Այլ գործառնական եկամուտներ	187,866	205,205
Գործառնական եկամուտներ	**3,199,744**	**3,251,854**
Վարկերից և այլ փոխատվություններից առաջացած կորուստներ	(133,226)	(499,994)
Ընդհանուր վարչական ծախսեր	(1,914,983)	(1,893,195)
Այլ գործառնական ծախսեր	(111,140)	(133,631)
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը	**1,040,395**	**725,034**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(208,079)	(145,007)
Ժամանակաշրջանի շահույթ	**832,316**	**580,027**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	(60,632)	(2,036)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	**(60,632)**	**(2,036)**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	**771,684**	**577,991**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 13/07/2018

ԿՏ

Վարկային կազմակերպության վարչության նախագահ
(Գործադիր տնօրեն)
Գլխավոր հաշվապահ

Հ.Թոխմախյան
Ա.Միքայելյան

Ենթահավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 126-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև թիվ 8)
«30» հունիս 2018թ.
"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ագաթանգեղոսի 2ա
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Լոտոմիոսի գրանցմանոցյան	Գերազանց պահուստ	Արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների վերագնահատման մնացեալ գումարներ	Չբաշխված շահույթ/վնաս	Լոտոմիոսի ընդհանուրը
Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I եռամսյակ)					
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2017թ.	4,905,960	125,799	58,375	1,088,276	6,178,410
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	(8,482)	(8,482)
Վերահաշվարկված մնացորդը	4,905,960	125,799	58,375	1,079,794	6,169,928
Համապարփակ եկամուտ	-	-	(2,036)	580,027	577,991
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ	-	-	-	580,027	580,027
Ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	(2,036)	-	(2,036)
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիս 2017թ.	4,905,960	125,799	56,339	1,659,821	6,747,919
Հաշվետու ժամանակաշրջան (II եռամսյակ)					
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2018թ.	4,905,960	186,195	75,204	1,740,174	6,907,533
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	(8,412)	(8,412)
Վերահաշվարկված մնացորդը	4,905,960	186,195	75,204	1,731,762	6,899,121
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	-	-	-	(1,234,448)	(1,234,448)
Հայտարարված շահաբաժիններ				(1,234,448)	(1,234,448)
Համապարփակ եկամուտ	-	64,971	(60,632)	767,345	771,684
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ	-	-	-	832,316	832,316
Ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	(60,632)	-	(60,632)
Ներքին շարժեր - մասհանումներ գլխավոր պահուստին		64,971		(64,971)	-
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիս 2018թ.	4,905,960	251,166	14,572	1,264,659	6,436,357

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 13/07/2018

ԿՏ

Վարկային կազմակերպության ղեկավարի նախագահ
(Գործադիր տնօրեն) Հ.Թոխմախյան
Գլխավոր հաշվապահ Ա.Միքայելյան

Ենթահավելված 9
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 126-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (Ձև 4)

«30» հունիս 2018թ.

"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ագաթանգեղոսի 2ա
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը	Նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը
1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	760,025	1,908,269
Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	1,885,924	2,039,780
Ստացված տոկոսներ	2,347,835	2,491,212
Վճարված տոկոսներ	(690,434)	(827,303)
Կորուստների վերականգնում	662,870	503,085
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	1,106,456	1,083,739
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(677,294)	(690,681)
Վճարված հարկեր	(863,508)	(520,272)
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	(1,125,899)	(131,511)
Տեղաբաշխված միջոցների (ավելացում)/նվազում	(285,661)	439,631
Հետգնման պայմանագրերով պարտավորությունների (նվազում)/աճ	(390,301)	25,403
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(449,937)	(596,545)
2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	(137,165)	(31,791)
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների ավելացում	(5,677)	(2,906)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(131,488)	(28,885)
3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից	45,611	(2,348,063)
Բանկերից ստացված վարկերի ավելացում/(նվազում)	493,778	(1,735,942)
Ստացված այլ փոխառությունների նվազում	(448,167)	(4,059,921)
Վարկային կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերի ավելացում	-	3,447,800
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(5,509)	(4,683)
Դրամական միջոցների զուտ հոսք	662,962	(476,268)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	600,597	1,248,025
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	1,263,559	771,757

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 13/07/2018

ԿՏ

«ՖԻՆՔԱ» "FINCA" 00445174

Վարկային կազմակերպության վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) Հ.Թոխմախյան
Գլխավոր հաշվապահ Ա.Միքայելյան

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

Վարկային կազմակերպության անվանումը «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

Ամսաթիվը 01/04/2018
30/06/2018

(հազ. դրամ)

Նորմատիվներ*	Փաստացի մեծությունը	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	4,905,960	150,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	7,587,154	1,000,000	Խախտում առկա չէ
$Ն_1$ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	29.0%	10.0%	Խախտում առկա չէ
$Ն_3^1$ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	1.0%	25.0%	Խախտում առկա չէ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 13/07/2018

ԿՏ

Վարկային կազմակերպության վարչության նախագահ
(Գործադիր տնօրեն) Հ.Թոխմախյան

Գլխավոր հաշվապահ Ա.Միքայելյան

«ՖԻՆՔԱ»
"FINCA"
00445174